Բաղկացած է 7 թերթից
Կազմված է 24.12.2012թ.
Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱԱ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ
26.12.12թ թիվ 14(1692) որոշմամբ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան
«26» դեկտեմբերի 2012 թ.

ՀԱՇՎՌՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԱՐԱԲԿԻՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 27.03.2007թ.
Հաշվառման համ. 264.180.07849
վկայական 01 Բ 001606
հարկ վճարողի հաշվառման համար՝ 00253113
27.03.2007թ. գրանցված կանոնադրության
թիվ
«01.2» փոփոխությունը գրանցված է ՀՀ ԱՆ
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության տարածքային
բաժնի կողմից «04» 02 2013թ.

Տ/Բ պետ՝

«ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն»

ՀԻՄՆԱՐԿ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

Երևան-2012

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկը (այսուհետ՝ նաև Հիմնարկ կամ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ), ստեղծվել է ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 12-ի N 1530-Ն որոշմամբ, հանդիսանում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ նաև Ակադեմիա) համակարգի ինքնավար գիտակրթական հաստատություն, ունի ՀՀ ԳԱԱ-ի հիմնարկի կարգավիճակ, չունի իրավաբանական անձի կարգավիճակ և ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմիններում:

2. Հիմնարկի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան է (այսուհետ նաև Ակադեմիա)՝ ի դեմս ՀՀ ԳԱԱ Նախագահի:

3. Հիմնարկը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին, այլ օրենքներին, միջազգային համաձայնագրերին, պայմանագրերի և իրավական ակտերին, ՀՀ ԳԱԱ կանոնադրությանը, ՀՀ ԳԱԱ որոշումներին, սահմանած լիազորություններին և սույն կանոնադրությանը համապատասխան:

4. Հիմնադրի և Հիմնարկի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5 Հիմնարկը օրենքով ու Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով, իր գործունեության նպատակներին համապատասխան, իրականացնում է՝ ուսումնական, հետազոտական, խորհրդատվական, փորձագիտական, գիտաարտադրական վճարովի ծառայություններ և ուսուցում:

6. Հիմնարկն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, հանձնված գույք, հաշվեկշիռ, նախահաշիվ, գանձապետական և բանկային հաշիվներ, այդ թվում տարադրամային:

7. Հիմնարկի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկ.
2) հայերեն կրճատ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ.
3) ռուսերեն լրիվ՝ учреждение «Международный научно-образовательный центр НАН РА».
4) ռուսերեն կրճատ՝ МНОЦ НАН РА.
5) անգլերեն լրիվ՝ «International Scientific-Educational Center of NAS RA» institution.
6) անգլերեն կրճատ՝ ISEC NAS RA:

8. Հիմնարկի գտնվելու վայրն է՝ 0019, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24 դ:

II. ՀԻՄՆԱՐԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

9. Հիմնարկի հիմնական խնդիրներն են՝

ա) բարձր որակավորում ունեցող մասնագետների, գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների վերապատրաստումը, նրանց որակավորման բարձրացումը.

բ) բնական, հասարակագիտական և հումանիտար գիտությունների բնագավառներում գիտական, ուսումնամեթոդական ու գիտամանկավարժական հետազոտությունների իրականացումը.

գ) կրթության և գիտության ինտեգրացման հիման վրա ուսուցման բովանդակության կատարելագործումը, մասնագիտությունների ու մասնագիտացումների համակարգերի մշակումը և արմատավորումը.:

10. Հիմնարկի իրավունակությունը ծագում է նրա կանոնադրությունը հաստատելու մասին հիմնադրի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

11. Հիմնարկի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և միջազգային պայմանագրերով:

12. Հիմնարկն իր հիմնադրի անունից, սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան, կարող է ունենալ քաղաքացիական իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված քաղաքացիական պարտականություններ:

13. Հիմնարկին պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրա պաշտպանության իրավունքը, Հիմնարկն իրականացնում է հիմնադրի հայեցողությամբ՝ նրա անունից:

14. Հիմնարկի իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով, ինչպես նաև՝ հիմնադրի որոշմամբ:

15. Առաջադրված խնդիրներին համապատասխան Հիմնարկը իրավասու է՝

ա) իրականացնել *հետբուհական մասնագիտական կրթություն* (այդ թվում վճարովի հիմունքներով)՝ ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի և դոկտորանտի կրթական ծրագրերով կիրառելով առկա, հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ուսուցման ձևերը.

բ) իրականացնել *բարձրագույն մասնագիտական կրթություն* (այդ թվում վճարովի հիմունքներով)՝ մագիստրոսի կրթական ծրագրերով կիրառելով առկա, հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ուսուցման ձևերը.

գ) մասնագիտական կրթության հենքի վրա հիմնական կրթական ծրագրերից դուրս մասնագիտական որակները կատարելագործման մասնագիտական վերարակավորումը ապահովման, անձի մասնագիտական որակավորումն անընդհատ լրացման նպատակով իրականացնել *լրացուցիչ կրթություն*.

դ) հետբուհական մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրերը (այդ թվում վճարովի հիմունքներով) իրականացնել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների համար, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց համար.

ե) կազմակերպելու մագիստրանտների, ասպիրանտների, դոկտորանտների, հայցորդների ընդունելությունը Ակադեմիա և/կամ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ.

զ) կազմակերպել և վերահսկել է ուսումնական գործընթացը, ապահովվելով անհրաժեշտ գիտամանկավարժական կադրերով և ուսումնամեթոդական ու նյութատեխնիկական միջոցներով.

է) իր կազմում սահմանված կարգով ստեղծելու ամբիոններ, գիտահետազոտական խմբեր, ուսանողական խորհուրդ, Հիմնարկի գործունեությունը ապհովվող բաժիններ և այլ ստորաբաժանումներ .

ը)իրականացնել գիտատեխնիկական հետազոտություններ և մշակումներ:

թ) սահմանելու մրցանակներ, անվանական կրթաթոշակներ.

ժ) իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնելու երկկողմանի ու բազմակողմանի ուղղակի կապեր հանրապետության և օտարերկրյա համալսարանների, գիտական հիմնարկների, գերատեսչությունների, այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, կատարելու տարատեսակ աշխատանքներ (կադրերի պատրաստում, ուսանողների և ասպիրանտների ուսուցում, մասնագետների փոխանակում, մշակութային-լուսավորչական և այլ գործունեություն, գիտական խորհրդակցությունների ու արշավախմբերի կազմակերպում և այլն).

ի) տնօրինելու իր ֆինանսական միջոցները:

լ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել մրցույթներ՝ ստորաբաժանումների ղեկավարների թափուր տեղերի համար:

խ) ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ.

ծ) դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.

կ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելու պայմանագրեր և կրելու պարտավորություններ:

16. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն համակարգում է գիտակրթական աշխատանքները ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների և համապատասխան բաժանմունքների հետ:

17. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն կազմակերպում և վերահսկում է իրականացվող ուսումնական գործընթացը, ապահովում է այն գիտամանկավարժական կադրերով և ուսումնամեթոդական ու նյութատեխնիկական միջոցներով:

18. Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում հիմնադիրը՝ օրենքով սահմանված կարգով:

19. Հիմնարկը պարտավոր է՝

1) օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ.

2) ապահովել կազմակերպության փաստաթղթերի (կազմակերպության կանոնադրություն, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթեր, կազմակերպության ներքին փաստաթղթեր, տարեկան հաշվետվություններ, հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, կառավարման

մարմինների նիստերի արձանագրություններ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր) պահպանումը:

III. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

20. Հիմնարկը կառուցվածքը ներառում է՝ գիտական խորհուրդը, ուսումնական մասը, դեկանատը, ինչպես նաև ասպիրանտուրայի, որակի ապահովման, արտաքին կապերի, տեղեկատվական տեխնոլոգիաների, շրջանավարտների հետ կապի և զբաղվածության (կարիերայի), հաշվապահական հաշվառման, անձնակազմի կառավարման, տնտեսական բաժինները, ուսումնական ամբիոնները, և գիտական խմբերը:

IV. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

21.Հիմնարկի կառավարումն իրականացնում է Ակադեմիան, Հիմնարկի գործադիր մարմինը՝ տնօրենը և Հիմնարկի գիտական խորհուրդը:

22. Ակադեմիայի լիազորություններն են՝

ա) Հիմնարկի կառավարման համակարգի սահմանումը.

բ) Հիմնարկի կանոնադրության հաստատումը.

գ) Հիմնարկի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը:

դ) Հիմնարկի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանների, կարգադրությունների ու ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչելը.

ե) Հիմնարկի լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը:

23. Հիմնարկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

24. Հիմնարկի տնօրենը ընտրվում է «ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 26 մայիսի 2011 թվականի N 815-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԳԱԱ կանոնադրությամբ սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից:

25. Հիմնարկի տնօրենի թեկնածությունը առաջադրելու իրավունք ունեն ՀՀ ԳԱԱ նախագահությունը, կենտրոնի գիտական խորհուրդը:

21. Հիմնարկի տնօրենը՝

1) գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնադրության, հիմնադրի կողմից տրված հանձնարարականների համաձայն.

2) իրականացնում է Հիմնարկի ընդհանուր ղեկավարումը.

3) պատասխանատու է Հիմնարկի գիտակրթական ծրագրերի իրականացման համար.

4) կենսագործում է գիտական խորհրդի և վերադաս մարմինների որոշումները.

5) հետևում է Հիմնարկի ֆինանսական և նյութատեխնիկական ապահովմանը.

6) հաշվետու է ՀՀ ԳԱԱ նախագահությանը Հիմնարկի գործունեության համար.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությամբ վերապահված լիազորություններին համապատասխան հանդես է գալիս Հիմնարկի անունից, տնօրինում է Հիմնարկի գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները), գործարքներ և պայմանագրեր է կնքում հիմնադրի անունից.

8) ներկայացնում է Հիմնարկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

9) գործում է առանց լիազորագրի.

10) տալիս է Հիմնարկի անունից հանդես գալու լիազորագրեր.

11) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Հիմնարկի աշխատողների հետ կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրեր պայմանագրեր.

12) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը.

13) Հիմնարկի աշխատողների նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

14) արձակում է աշխատանքային իրավահարաբերություններից բխող հրամաններ Հիմնարկի աշխատողներին արձակուրդ տրամադրելու (հետ կանչելու), նրանց գործուղումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում իր գործուղումների վերաբերյալ.

15) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

26. Հիմնադիրը Հիմնարկի գործունեության նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարգով:

27. Գիտական խորհուրդը Հիմնարկի գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող կոլեգիալ մարմին է, որի նախագահը տնօրենն է:

Գիտական խորհրդի անդամների ընտրություններն անց են կացվում տնօրենի նշանակումից հետո երկու ամսվա ընթացքում:

Գիտական խորհրդի կազմը և անդամների թիվը, տնօրենի առաջարկով, հաստատում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը:

Ի պաշտոնե խորհրդի անդամներ են տնօրենը, նրա տեղակալը և Հիմնարկի գիտական քարտուղարը: Հիմնարկի գիտական քարտուղարը նաև գիտական խորհրդի գիտական քարտուղարն է:

Հիմնարկի ի պաշտոնե և հրավիրված անդամների թիվը չպետք է գերազանցի գիտական խորհրդի անդամների թվի մեկ երրորդը:

28. Գիտական խորհուրդը իրավասու է ընդունելու որոշումներ, եթե նիստին մասնակցում է նրա կազմի առնվազն երկու երրորդը: Գիտական խորհրդի որոշումն ընդունված է, եթե դրա օգտին քվեարկել է ներկաների կեսից ավելին: Որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդը որոշում չի ընդունում փակ գաղտնի քվեարկություն կատարելու մասին:

Կադրային նշանակումների և Հիմնարկի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ գիտական խորհրդի որոշումներն ձևակերպվում են տնօրենի համապատասխան հրամանով:

Տնօրենի և գիտական խորհրդի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ ԳԱԱ նախագահությունում:

29. Հիմնարկի գիտական խորհուրդը՝

ա) քննարկում և հաստատում է Հիմնարկի գիտական կադրերի պատրաստման, գիտական հետազոտությունների, միջազգային գիտական համագործակցության հարցերը,

բ) քննարկում և հաստատում է Հիմնարկի ռազմավարության ծրագիրը,

դ) քննարկում և հրատարակության է երաշխավորում Հիմնարկի աշխատակիցների մենագրությունները, ժողովածուները և այլն,

ե) առնվազն տարին մեկ անգամ քննարկում և հաստատում է տնօրենի և գիտական ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվություններն ու առաջարկությունները Հիմնարկի գիտակրթական գործունեության վերաբերյալ:

30. Հիմնարկի գիտական ստորաբաժանումների ղեկավարներն ընտրվում են Հիմնարկի գիտական խորհրդի կողմից՝ 5 տարի ժամկետով: Ընտրությունների, պայմանների և ժամկետի մասին մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով տրվում է հայտարարություն:

31. Գիտակրթական ստորաբաժանումների ղեկավարների թեկնածուներ առաջադրելու իրավունքը պատկանում է տնօրենին, Հիմնարկի գիտական խորհրդին կամ ստորաբաժանման գիտակրթական անձնակազմին:

Թեկնածուների առաջադրման համար փաստաթղթերը ներկայացվում են Հիմնարկի գիտական քարտուղարին: Գրանցվում են այն թեկնածուները, ովքեր տալիս են ընտրություններին մասնակցելու մասին գրավոր համաձայնություն:

Հիմնարկի գիտակրթական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում ընտրվելու մասին որոշումն ընդունվում է գիտական խորհրդի կողմից՝ փակ գաղտնի քվեարկությամբ՝ ցուցակային կազմի ձայների պարզ մեծամասնությամբ:

Եթե քվեարկության երկու փուլերի ընթացքում ընտրությունը չի կայանում, ապա գիտակրթական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնակատարի նշանակման (2 տարի ժամկետով) մասին որոշումը ընդունում է Հիմնարկի տնօրենը:

32. ՀՀ ԳԱԱ անդամներին գիտակրթական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոններում նշանակում է Հիմնարկի տնօրենը՝ 5 տարի ժամկետով, առանց մրցույթի և ընտրությունների:

V. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՒՅՔԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

32. Հիմնարկը իր գործունեության նպատակներին և խնդիրներին համապատասխան, ՀՀ ԳԱԱ-ի սահմանած լիազորությունների շրջանակներում, տիրապետում և օգտագործում է ՀՀ ԳԱԱ-ի կողմից իրեն տրամադրված և իր գործունեության արդյունքում ձեռք բերված գույքը դրա նշանակությանը համապատասխան: Հիմնարկի գույքը սեփականության իրավունքով պատկանում է հիմնադրին:

33. Հիմնարկի տիրապետմանն ու օգտագործմանը կարող է պատկանել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան, չեն կարող պատկանել Հիմնարկին: Հիմնարկի տնօրինությանը պատկանող գույքի թիվն ու արժեքը չեն սահմանափակվում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

34. Հիմնարկի գույքը և ֆինանսական միջոցները ձևավորվում են՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և ՀՀ ԳԱԱ-ին հատկացված միջոցներից,

բ) գիտական, տնտեսական և հրատարակչական–տպագրական գործունեությունից ստացված եկամուտներից,

գ) կրթության ոլորտում ծավալված ծառայություններից, այդ թվում վճարովի ծառայությունների և ուսուցման կազմակերպումից գոյացած միջոցներից,

դ) սեփական մշակումների իրացմանն առնչվող գիտաարտադրական գործունեությունից ստացված եկամուտներից,

ե) հանրապետության և արտերկրի իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրային աշխատանքներից,

զ) իրավաբանական և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ արտերկրի) նվիրատվություններից, դրամաշնորհներից, ինչպես նաև կտակներից,

է) միջազգային գիտակրթական ծրագրերով (այդ թվում տարադրամներով) հատկացված ֆինանսական և նյութական միջոցներից,

ը) կազմակերպության գույքից և գույքային իրավունքից ստացված եկամուտներից,

թ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ միջոցներից:

35. Հիմնարկի՝ վճարովի ծառայություններից և այլ արտաբյուջետային հասույթներից ստացված միջոցները անցնում են նրա ինքնուրույն տնօրինմանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված կարգով և հաշվառվում են առանձին հաշվեկշռով:

36. Հիմնարկն իր վճարովի ծառայություններից ստացված միջոցներից մասհանում է կատարում լիազորված մարմնին՝ ՀՀ ԳԱԱ-ին իր կոլեգիալ մարմնի՝ կենտրոնի գիտական խորհրդի և լիազորված մարմնի՝ ՀՀ ԳԱԱ-ի որոշմամբ սահմանված կարգով և չափով:

37. Հիմնարկը իր գործունեության մասին յուրաքանչյուր տարի հաշվետվություն է ներկայացնում ՀՀ ԳԱԱ նախագահությանը:

VI. ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

38. Հիմնարկը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հիմնադրի որոշմամբ:

39. Հիմնարկի լուծարման դեպքում նրան պատկանող գույքը ամրացվում է ՀՀ ԳԱԱ-ին:

40. Հիմնարկի գործունեությունը համարվում է դադարած՝ հիմնադրի սահմանած օրվանից: